



63. ԻՇՈՒ ԱՐՔԱՎՈՒԹԻՆ

Ժամանակով թագավորը կիւնը, ուր ախչիկ:

Ան թագավոր ըզուր ախչիկ շատ կուգեր:

Օրըմ էսաց ուր ախչըկան. - Քու պատկերք ա՛ռ վնր քաֆ-կի՛մ յան վնր պանի՛մ: Թը տու տուն չէւնր, իս հնազըր քի թաննաշ կանիմ:

Կըսը. - Կակո՛, տե կանաչ-կարմիր արփըշում պի՛, իս իմ պատկեր առնիմ:

Թագավոր ուր ուզած պանիր զըմեն կը պիրը, ախչիկ ուր պատկեր կանը վնր քաֆկին, քաֆիկ կը տընը հանեչք:

Յիրիկուն ուր խեր կը գա, կըսը. - Յո՛ւր ը քու պատկեր, խանի՞ր իս:

Կըսը. - Խա՛, խանիր իմ, կի հանեչք:

Դուր կան կը գան, չերեվա: Թագավոր տալալ կը տա կան-չիլ, էլմէլ թու մարթ սալըղ չի տա: Կը մնա, օրըմ Չանչալիկըմ կերթա ծովու պըռուկ վե, կը տեսնա յոթ քիզ էշ, ընկած մեմեկը հիտիվ, կերթան, ան էլ իշու՛մ պուչ կը բըռնը, կերթա:

Շատ կերթա, քիչ կերթա, կերթա տեղըմ կը տեսնա, անցկուն կանաչ մը, անցկուն կանաչ մը, որ յալա յա սըթար, քանի՛մ կուգիս մուխիր, իշու կան: Չանչալիկ կազամ էլ կերթա, գարմանց պիրթըմ կը տեսնա, կանտ կանը, կը յա ան պիրթ, կը տեսնա իրիք քասա ծավար գի հանտե, կազիր վերա, գտելքիր խա կըշտին: Կերթա, հանեն մեկից փըշու՛մ կուտը, կը պաղկըվը կուտորուկ սընտըկի՛մ մեչ:

Պոմ կը մնա, մարթըմ, երկու խաթուն կը գա՛ն հանտե, ան մարթ պատկիրըմ կը խանը, կը պագնը, կը լա:

Չանչալիկ կը թըմըն տուս, կըսը. - Ի՞նչ տաս ծի՛ անտու տեր պիրիմ քի:

Կըսը. - Ինչ կուզիս:

Չանչալիկն էլ կը խարցընը, կըսը. - Կանաչ տեղըմ կեր վա՛ր ճամբխին, ան ի՞նչ կեր:

Կըսը. - Իշու արքա՛վութին էր:

Չանչալիկ կերթա, թագա՛վորին կըսը. - Թագա՛վոր, ի՞նչ տաս ծի, քի ախչկան սուրաթ պիրիմ:

Կըսը. - Ինչ մըրազ անիս:

Կըսը. - Դե քի ախչիկ տո՛ւ, տանիմ խա ծի, ուր պիրիմ:

Ախչիկ կը տանը ան կանաչ տեղ վե, կը ընցըցը:

Ախչիկ կըսը. - Նա՛ ի՞նչ կանաչ տեղ էր:

Կըսը. - Իշու արքա՛վութին էր:

Չանչալիկ զախչիկ կը տանը, կը մըտուցը սընտուկ վե, չուր Սերոփ թագա՛վորը լաճ խա՛ն ան երկու ջընիրուն կը գա՛ն, խաց կուտը: Պատկեր կառնը, կը պագնը, կը լա:

Չանչալիկ վուրչիկ զախչիկ կը պիրը, Սերոփ թագա՛վորը լաճու հիրճիվ, կըսը. - Քի ուզած պիրիր իմ:

Սերոփ թագա՛վորը լաճ ան ախչկան կըսը. - Ապա՛ ի՞նչըխ անինք՝ նա ջընիրուց ազատվինք:

Կըսը. - Իս իլնիմ, երթամ իմ խոր տուն, նուր տու ա՛րը, պալը անունը չըգան:

Կիլնը, ինք կերթա, իրիկ անու հիտիվանց կերթա:

Օրըմ կը մնա, Սերոփ թագա՛վոր մարթ կը հորողկը վա՛ր ուր լաճու տըռան, կըսը. - Հատը փըսթիըսթուցըմ կը գա՛ն, ինչ կը լըսիս, գը՛րը, պի՛ ծի:

Ան մարթ գեժ, սարսամ մարթըմ կիլնը, թու պան չըգըրը, թագա՛վոր կըսը. - Ի՞նչ կը գա՛ն, ի՞նչ գըրիցիր, ի՞նչ կըսին:

Կըսը. - Իս թու պա՛մ չըլըսա:

Դոր կիլնը, իմաստուն մարթըմ կը հորողկը, ան մարթ կերթա, կը լըսը ծե՛մ, կըսը. «Ի՞նչըխ անինք, նա ջընիր էլըմ իկին, մի տան տակ լըղըմ անինք, քանց մի տուն պանցրութին թավըփետ լըցինք, ընչ ջընիր կը գան, անունց էշվընկիթ թալինք կըրակ, բալը ազատվինք»:

Ատ հըմեն կը գըրը, կը տանը թագավորին:

Թագավոր ուր լաճուճ կըսը. - Աղեկ կը փըսակվիս: Կանթնա չէ քու խոր սա՝ կակո՛, խա՛, վուըլա՛, փըսակըվիր իմ:

Դորսեն կըսը. - Մըհա քու կընիկ խա՛ն տանիս, թամաշա անինք:

Ան ընչ ուր կընիկ կը խանը տանիս, թագավորը, վուըզիր ուր մարթիրով կը գան, թամաշա կանին, կըսին. «Մաշալա, խորոտ ախչիկ մը»: Պոմ կը մնա, չըմնա, էրկու ջընիրն էլ կը գան, կը յան թագավորը լաճու հողեն, ուրինց էշվընկիք կը խանին, կիլնին իսան, կը գան մա ատ մարթիրուն թամաշա:

Թագավորը լաճըն էլ կը յա, ատ փետիր ընչ լըցիր էր ուր տան տակու մըղարեն վե, կը վառը, ջընիրու էշվընկիք կը թալը վերա:

Ընչ էշվընկիք կը վառվին, ջըն կընքըտիր խուտ կանին, կը յան, ուր կըրակից խանին ուրինց էշվընկիք:

Կերթան, ուրինք կը թալին մա կըրակին, ուրինց խալ տը խանին, էրկուսըն էլ կը վառվին:

Նուր թագավոր ուր մարթիրով թաժա խարսնիս կանին, անունք կը խասնին ուրինց մըրագին, դուք էլ՝ ձի մըրագին:

